ՀՀ տարածքային
կառավարման և
ենթակառուցվածքների
նախարարություն

Գերմանական
համագործակցություն
DEUTSCHE ZUSAMMENARBEIT

Implemented by
giz

ՀՀ պատական
կառավարման
ակադեմիա

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԱՎԱԳԱՆԻՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

ՄՈԴՈՒԼ 8.

Մասնակցային ժողովրդավարությունը տեղական ինքնակառավարման համակարգում

Երևան, 2026

Ուսումնական մոդուլը մշակվել է Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի կողմից՝ ԳՄՀԸ/GIZ համագործակցության շրջանակում **«Ավագանու անդամների վերապատրաստման կարիքների գնահատում և կարողությունների զարգացում»** ծրագրով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄՈԴՈՒԼԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ..... 4

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 7

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ..... 8

ՄԱՍ 1. ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ (ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ) 9

ՄԱՍ 2. ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ (ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ)..... 35

ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 42

ՆՅՈՒԹԵՐ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ 43

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ..... 45

ՄՈԴՈՒԼԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Մոդուլի նպատակը	Համայնքների ավագանիների անդամների կարողությունների զարգացում
Մոդուլի խնդիրները	Տեսական և պրակտիկ ուսուցման միջոցով զարգացնել ունկնդիրների գիտելիքները մասնակցային ժողովրդավարության և մասնակցային կառավարման մասին, ընդլայնել տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության ձևերի և իրականացման միջոցների մասին իրազեկվածության շրջանակը, նպաստել տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների արդյունավետության մակարդակի բարձրացմանը, աջակցել համայնքային խնդիրների լուծմանը համայնքի բնակչության ակտիվ ներգրավվածություն ունենալու կարողությունների կատարելագործմանը, ընդլայնել տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների կայացման գործընթացներում բնակիչների մասնակցության կարևորության մասին իրազեկվածության շրջանակը:
Մոդուլի տևողությունը	1-4 ժամ
Մուտքային պահանջները	Մոդուլն ուսումնասիրելուց առաջ ունկնդիրը պետք է առնվազն ընդհանրական գիտելիքներ ունենա տեղական ինքնակառավարմանը համայնքի բնակիչների մասնակցության հիմունքների, տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին բնակիչների իրազեկվածության ապահովման անհրաժեշտ պայմանների, ավագանու անդամի իրավական կարգավիճակի հիմնական տարրերի վերաբերյալ:
Ուսումնասիրվող թեմաները	**Թեմա 1.** Մասնակցային ժողովրդավարություն և մասնակցային կառավարում **Թեմա 2.** Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության ձևերը և իրականացման միջոցները ՀՀ ներպետական օրենսդրության շրջանակներում **Թեմա 3.** Տեղական հանրաքվեի կազմակերպման և իրականացման գործընթացներում համայնքի ավագանու լիազորությունների շրջանակը
Մոդուլի գնահատման կարգը և միջոցները	Գնահատումն իրականացվելու է թեստային առաջադրանքի միջոցով: Թեստային առաջադրանքը կազմված է մոդուլի

	թեմաներին անդրադարձող **10** հարցից: Թեստային առաջադրանքի յուրաքանչյուր հարցի համար սահմանված է միավոր՝ ելնելով դժվարության մակարդակից և թեմային համապատասխանությունից: Թեստային առաջադրանքը համարվում է հաջողությամբ ավարտված, եթե ճիշտ պատասխանները կազմում են առաջադրանքի բոլոր հարցերի առնվազն 70%-ը:
Վերապատրաստման դասընթացից ակնկալվող արդյունքները *(գիտելիքներ, հմտություններ, կարողություններ)* Այս մոդուլը հաջողությամբ ավարտելուց հետո ունկնդիրը պետք է՝	
Արդյունք 1.	*կարողանա սահմանել «տեղական ինքնակառավարմանը համայնքի բնակիչների մասնակցություն» հասկացությունը, անվանել մասնակցության հիմնական ձևերը*
Արդյունք 2.	*կարողանա նպաստել տեղական ինքնակառավարմանը համայնքի բնակիչների մասնակցության ակտիվացմանը, բացատրել նրանց իրավունքները, ցույց տալ մասնակցության ձևերը, ընտրել և համայնքի գործերի կառավարմանը մասնակից դարձնել համայնքի ակտիվ բնակիչներին, խրախուսել առաջնորդությունը, կամավորականությունն ու բարեգործությունը*
Արդյունք 3.	*իմանա տեղական ինքնակառավարմանը համայնքի բնակիչ-ների մասնակցության ձևերը, միջոցները և ընթացակարգերը, ընտրել և համայնքի գործերի կառավարմանը մասնակից դարձնել համայնքի ակտիվ բնակիչներին*
Արդյունք 4.	*կարողանա ներկայացնել տեղական ինքնակառավարմանը համայնքի բնակիչների մասնակցության վերաբերյալ օրենքով ավագանուն վերապահված լիազորությունները*
Արդյունք 5.	*կարողանա ակտիվացնել համայնքում բնակիչների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների, ոչ ֆորմալ խմբերի լիարժեք և ժամանակին մասնակցությունն ու ներգործությունը համայնքային քաղաքականությունների մշակման և որոշումների կայացման գործընթացներում*
Մոդուլի ուսուցման մեթոդաբանությունը	*Մոդուլի ուսուցման ընթացքում, ի լրումն ներկայացված տեսական նյութի մատուցման, անհրաժեշտ է կիրառել ինտերակտիվ ուսուցման առնվազն հետևյալ եղանակները.*

	• *աշխատանք խմբերով* • *անհատական առաջադրանքների կատարում* • *ինքնակրթություն՝ լրացուցիչ նյութերի ընթերցում և դիտում*
Մոդուլի ուսուցման համար անհրաժեշտ ռեսուրսները	• *մոդուլին և թեմայի առանձնահատկություններին տիրապետող փորձագետ* • *ուսումնական տարածք՝ կահավորված անհրաժեշտ սարքավորումներով ու նյութերով*

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՀՀԶԾ	Համայնքի ինգամյա զարգացման ծրագիր
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմիններ
ՄԺԾԾ	Միջնաժամկետ ծախսերի ծրագիր
ԽՄ	Խորհրդակցական մարմին

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ

Մասնակցային ժողովրդավարություն	համայնքում իրականացվող գործընթաց, որի միջոցով բնակիչները լայն մասնակցություն են ունենում համայնքային քաղաքականությունների մշակմանը և իրականացմանը, համայնքային խնդիրների բարձրացմանը և լուծմանը
Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցություն	համայնքում իրականացվող գործընթաց, որի միջոցով բնակիչները, առանց խտրականության, տեղեկացվում են տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին և կարող են ուղղակի կամ անուղղակի ներգործություն ունենալ տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների վրա
Տեղական հանրաքվե	համայնքի գործերի կառավարմանն անմիջականորեն մասնակցելու եղանակ, որն իրականացվում է տվյալ համայնքի բնակիչների համայնքային նշանակության հանրային հարցերով քվեարկության միջոցով
Ներկայացուցչական ժողովրդավարություն	կառավարման ձև, որի կրողներն են բնակչությունը ներկայացնող ուղղակի ընտրություններով ընտրված անհատները
Պատշաճ ժողովրդավարական կառավարում	կառուցակարգերի, գործընթացների, փոխհարաբերությունների և ինստիտուտների համալիր է, որոնց միջոցով քաղաքացիները և նրանց խմբերը համակարգում են իրենց հետաքրքրություններն ու շահերը, իրացնում են իրենց իրավունքներն ու պարտականությունները և հանդես են գալիս համատեղ

ՄԱՍ 1. ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ (ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ)

Թեմա 1. Մասնակցային ժողովրդավարություն և մասնակցային կառավարում

Տեղական ինքնակառավարման մասին տեսության հիմնադիրներից մեկը՝ ֆրանսիացի պետական գործիչ, պատմաբան և դիվանագետ Ալեքսիս Դը Տոկվիլի պատկերավոր արտահայտությամբ. *«Տեղական ինքնակառավարումը ժողովրդավարության և անկախության համար կոչված է խաղալու այն նույն դերը, ինչ փարրական դպրոցը գիտության համար»:*

Մասնակցային ժողովրդավարություն և մասնակցային կառավարում

Ժողովրդավարական հասարակության կարևոր բաղադրիչը քաղաքացիների մասնակցությունն է հասարակական կյանքին: Ժողովրդավարությունը հնարավոր չէ պատկերացնել առանց հասարակական գործընթացներին այն մարդկանց ներգրավվածության, որոնք հանրային քաղաքականությունների և որոշումների գլխավոր շահառուներն են:

Տեղական ժողովրդավարության հիմնական սկզբունքներից մեկն այն է, որ քաղաքացիները պետք է իրավունք ունենան ազդելու իրենց համայնքի ՏԻՄ-երի որոշումների վրա, որոնք վերաբերում են նրանց կյանքին, կենցաղին և համայնքին՝ ամբողջությամբ:

Մասնակցային ժողովրդավարության հաստատման ամենակարևոր գործիքը մասնակցային կառավարման ապահովումն է:

Մասնակցային կառավարումը

մասնակցային ժողովրդավարության ամենակարևոր բաղադրիչն է, որը ենթադրում է բնակիչների լայն զանգվածների ընդգրկումը համայնքի կառավարման մեջ: Մասնակցային կառավարումը, ամենից առաջ, ընդգծում է այն մարդկանց ներգրավումը կառավարման մեջ, որոնք դուրս են մնացել ավանդական կառավարման գործընթացներից: Դա նշանակում է այնպիսի կառուցակարգերի ներդրում, որոնք կխթանեն այն բնակիչների ուղղակի ներգրավումը համայնքային որոշումների կայացման գործընթացներում, որոնք տարբեր պատճառներով մասնակցելու դժվարություններ են ունենում: Դրանք հատկապես սոցիալական կարիքավոր խմբերի, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներն են և կանայք:
Մասնակցային կառավարումը նշանակում է նոր տիպի փոխհարաբերությունների ձևավորում համայնքի բնակիչների և տեղական իշխանությունների միջև: Այն ընդգրկում է ֆորմալ և ոչ ֆորմալ ինստիտուտներ և գործընթացներ, որոնք ապահովում են փոխադարձ կապը և փոխազդեցությունը տեղական իշխանությունների և նրանց մատուցած ծառայություններից օգտվող շահառուների միջև: Դրանք ոչ միայն տեղական ինքնակառավարման պաշտոնական ինստիտուտներն են (համայնքի ավագանի, համայնքի ղեկավար և այլն), այլև այն ինստիտուտները և կազմակերպությունները (ՀԿ-ներ, հիմնադրամներ և այլն), որոնք որոշակի ազդեցություն ունեն տեղական ինքնակառավարման կամ համայնքի կառավարման իրականացման վրա: Տեղական իշխանությունները, այս դեպքում, քաղաքականություններ և որոշումներ են ընդունում ոչ թե մեկուսացված ձևով, այլ խորհրդակցելով բոլոր նրանց հետ, ովքեր անմիջականորեն կրում են դրանց ազդեցությունը: Այդ փոխհարաբերություններում կարևոր և ծանրակշիռ դեր ունեն տեղական իշխանությունները, սակայն նրանք չեն որոշում ամեն ինչ: Մասնակցային կառավարումը վերաբերում է միայն տեղական իշխանությունների և համայնքի բնակիչների կոլեկտիվ շահերի վրա հիմնված փոխհարաբերություններին: Այն չի ընդգրկում անձնական շահի վրա հիմնված կամ անհատական (թեկուզ կառավարմանը վերաբերող) փոխհարաբերությունները: Մասնակցային կառավարման կարևոր դերակատարները համայնքի բնակիչների խմբերն են՝ իրենց կոնկրետ շահերով:
Մասնակցային կառավարումը լայն հնարավորություններ է բացում քաղաքացիական հասարակության սուբյեկտների և բնակիչների շարժումների համար: Դրա միջոցով ՀԿ-ները և քաղաքացիական հասարակության այլ սուբյեկտները տեղական իշխանություններին են ներկայացնում իրենց առաջարկությունները, ծրագրերը և տեսակետները: Ձևավորված քաղաքացիական շարժումները մեծ դեր են խաղում տեղական իշխանությունների առջև խնդիրներ բարձրացնելու և դրանց դրական լուծումներին հասնելու գործում: Մասնակցային կառավարումը կարող է դիտարկվել որպես տեղական իշխանությունների լեգիտիմության աստիճանի բարձրացման միջոց: Այն տեղական իշխանությունները, որոնք կորցրել են համայնքի բնակիչների վստահությունը և նրանց ընդունած որոշումները դարձել են խնդրահարույց, կարող են վերականգնել վստահությունը՝ համայնքի կառավարմանը շահագրգիռ խմբերին ներգրավելու միջոցով:

Մասնակցային կառավարումը նպատակ ունի լուծելու հետևյալ խնդիրները.

- **Բնակիչներն ավելի լավ գիտեն, թե ինչպիսի համայնք են ուզում ունենալ, քանի որ ծառայությունների վերջնական սպառողները հենց իրենք են:**
- **Բնակիչներին լսելով կարելի է խմբավորել առավել հաճախ հանդիպող առաջարկություններն ու ցանկությունները և առաջնահերթություն տալ դրանք՝ մշակվող ծրագրում:**
- **Ծանոթանալ այնպիսի խնդիրների, որոնք, չնայած հրատապությանը, աչքաթող են արվել կառավարման մարմինի կողմից:**
- **ՏԻՄ-երին դարձնել ավելի հաշվետու, պատասխանատու և քաջատեղյակ առկա բոլոր խնդիրներին:**
- **Ձևավորել քաղաքացիական հասարակություն:**
- **Ստանալ բնակիչների աջակցությունը, հանդուրժողականությունը և վստահությունը իրականացվող ծրագրերի նկատմամբ:**
- **Գիտակցել սեփական անձի դերը համայնքի կառավարման գործընթացում:**

Քաղաքացիական հասարակությունը **ազատ, ակտիվ, ինքնակազմակերպվող մարդկանց համայնք է, որը պաշտպանում է հանրային շահը, վերահսկում իշխանությանը և նպաստում ժողովրդավարության զարգացմանը:**

Այն գործում է պետությունից անկախ, բայց համագործակցում է դրա հետ՝ հանրային շահերը (այսինքն ոչ միայն մարդկանց, այլ նաև՝ կենդանիների, բնության և ընդհանրապես հասարակական կարևոր արժեքների շահերը) ներկայացնելու, պաշտպանելու և զարգացնելու համար:

Համայնքի կառավարմանը բնակիչների մասնակցության ապահովումը **Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի գաղափարական հենքն** է, որի նախաբանում ամրագրված է այն գաղափարը, որ **հանրային կառավարման գործերին ժողովրդի մասնակցությունը պետք է դասվի Եվրոպայի խորհրդի անդամ բոլոր պետությունների ժողովրդավարական սկզբունքների շարքին:**

Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի ընդունումից և երկար ժամանակ գործելուց հետո Եվրոպայի խորհրդի կազմի մեջ մտնող երկրների Նախարարների կոմիտեն որոշեց, որ տեղական ինքնակառավարման ոլորտում մասնակցայնության գործընթացը Եվրոպայում թույլ է, և անհրաժեշտ է ինչ-որ քայլ անել մասնակցայնության գործընթացը ակտիվացնելու համար, ինչի հետևանքով 2009թ. Ուտրեխտում ընդունվեց.

Տեղական ինքնակառավարման Եվրոպական Խարտիայի ՏԻՄ-երի գործներին

մասնակցելու իրավունքի վերաբերյալ լրացուցիչ արձանագրությունը, որով սահմանվեց ՏԻՄ-երի գործերին մասնակցելու իրավունքը և մասնակցելու իրավունքն ապահովող միջոցները:

Այս արձանագրության հիմնական շեշտադրումը հետևյալն է. **ՏԻՄ-երը պետք է ոչ թե պարզապես երաշխավորեն մասնակցելու իրավունքի իրականացումը, այլև ակտիվ միջոցներ ձեռնարկեն առ այն, որ համայնքի բնակչության կողմից մասնակցելու իրավունքի իրականացման արդյունքում բարձրանա համայնքային գործերի կառավարման արդյունավետությունն ու ընդունվող որոշումների հիմնավորվածությունը, նպատակայնությունն ու որակը**:

Պատշաճ ժողովրդավարական կառավարումը

ՄԱԿ-ի փաստաթղթերում սահմանված է՝ ***«Պատշաճ ժողովրդավարական կառավարումը կառուցակարգերի, գործընթացների, փոխհարաբերությունների և ինստիտուտների համալիր է, որոնց միջոցով քաղաքացիները և նրանց խմբերը համակարգում են իրենց հետաքրքրություններն ու շահերը, իրացնում են իրենց իրավունքներն ու պարտականությունները և հանդես են գալիս համատեղ»:***

Հետաքրքիր է իմանալ, որ ...

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն 2008թ. մարտին ընդունել է «Տեղական մակարդակում նորարարության և պատշաճ կառավարման ռազմավարությունը» փաստաթուղթը, որում տեղ են գտել նաև պատշաճ ժողովրդավարական կառավարման 12 սկզբունքները՝

Դրանք են.

1. Ընտրությունների, ներկայացուցչության և մասնակցության արդար իրականացում
2. Արձագանքելու պատրաստակամություն
3. Տնտեսական և սոցիալական արդյունավետություն
4. Հրապարակայնություն և թափանցիկություն
5. Իրավունքի գերակայություն
6. Անբասիր վարք
7. Իրավասություն և կարողություն
8. Նորամուծություն և փոփոխություններին պատրաստակամություն
9. Կայունություն և երկարաժամկետ ուղղվածություն
10. Հստակ ֆինանսական կառավարում
11. Մարդու իրավունքներ, մշակութային բազմազանություն և սոցիալական միասնություն
12. Հաշվետվողականություն

Ժողովրդավարության ձևերը

Հայտնի են ժողովրդավարության տարբեր ձևեր, որոնք պետք է առկա լինեն միաժամանակ և գործեն որոշակի հավասարակշռության պայմաններում՝ իրական ժողովրդավարության հասնելու համար: Այդ ձևերն են՝

- Ներկայացուցչական ժողովրդավարություն
- Ուղղակի (մասնակցային) ժողովրդավարություն

Ներկայացուցչական ժողովրդավարությունը

կառավարման ձև է, որի կրողներն են բնակչությունը ներկայացնող ուղղակի ընտրություններով ընտրված անհատները: Հայաստանի տեղական մակարդակում այդ անհատներն են համայնքի ավագանու անդամները և համայնքի ղեկավարը: Նրանք ընտրվում են հինգ տարի ժամկետով և այդ ընթացքում իրականացնում են օրենքով իրենց վերապահված լիազորությունները: Նրանք կարող են հաշվի առնել համայնքի բնակիչների առաջարկությունները, սակայն վերջնական որոշումների ընդունման և իրականացման հարցում ամբողջությամբ պատասխանատվություն են կրում իրենք:
Ներկայացուցչական ժողովրդավարության հաստատման կարևոր նախապայմանն արդար և թափանցիկ ընտրությունների անցկացումն է:

Ուղղակի (մասնակցային) ժողովրդավարություն

Մասնակցային ժողովրդավարությունը տեղական մակարդակում այնպիսի գործընթաց է, որի միջոցով բնակիչները լայն մասնակցություն են ունենում համայնքային քաղաքականությունների մշակմանը և իրականացմանը, համայնքային խնդիրների բարձրացմանը և լուծմանը:
Տեղական մակարդակում ուղղակի ժողովրդավարության ձևերից են.

- տեղական հանրաքվեն,
- հանրային նախաձեռնությունը,
- բնակիչների հանձնաժողովը,
- համայնքային ժողովը,
- հանրային լսումները,
- հանրագիր/պահանջագիրը,
- համացանցային (ինտերնետային) հաղորդակցությունը,

- շուկայական կառուցակարգերը,
- և այլն:

Հանրային նախաձեռնությունը

մի ընթացակարգ է, որը հնարավորություն է տալիս բնակիչներին որոշումների առաջարկներ ներկայացնել կամ ստիպել տեղական իշխանություններին քննարկել կամ քվեարկել կոնկրետ հարցի վերաբերյալ: Դա նշանակում է, որ բնակիչներն իրենք չեն որոշում, բայց ստիպում են ՏԻՄ-երին որոշում ընդունել հօգուտ հանրության:

Բնակիչների հանձնաժողովը

համայնքի բնակչությունից, ներկայացուցչականության հիման վրա ընտրանքային խմբի ձևավորում է՝ նրանց հետ հանրային քաղաքականության հարցերի վերաբերյալ խորհրդակցելու համար: Այս ինստիտուտը կարող է նաև օգտագործվել մինչ ընդունելը կամ կիրառելը առաջարկները կամ հայեցակարգերը փորձարկելու համար:

Համայնքային ժողով

որպես կանոն, հրավիրվում է փոքր համայնքներում. այն կարող է հնարավորություն ընձեռել տեղի բնակչությանը ուղղակիորեն և միասին որոշում կայացնել տեղական հանրային գործերի վերաբերյալ՝ տեղի ներկայացուցչական մարմնի փոխարեն:

Հանրային լսումները

ընտրովի մարմինները կարող են կամ պարտավորված են կանոնավոր ձևով կազմակերպել՝ տեղեկացնելու տեղական բնակչությանը և/կամ ստանալու նրանց կարծիքը տեղական հանրային գործերի մասին:

Հանրագիր/պահանջագիրը

համայնքի բնակիչների խմբի ստորագրությամբ փաստաթուղթ է, որի միջոցով նրանք արտահայտում են իրենց կոլեկտիվ ցանկությունները, առաջարկները և բողոքները:

Համացանցային (ինտերնետային) հաղորդակցությունը

համայնքի բնակչության և տեղական իշխանությունների միջև օպերատիվ երկխոսության, ինչպես նաև՝ էլեկտրոնային ծառայությունների մատուցման ապահովման միջոց է:

Շուկայական կառուցակարգերը

իրական ժողովրդավարության բաղկացուցիչ մաս են կազմում և այլընտրանքների ու հակակշիռների ընտրության հնարավորություններ են ստեղծում: Մասնավոր հատվածի ներգրավումը տեղական մակարդակում հանրային ծառայությունների մատուցման ոլորտ, զգալիորեն բարձրացնում է դրանց արդյունավետությունը:

Թեմա 2. Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության ձևերը և իրականացման միջոցները ՀՀ ներպետական օրենսդրության շրջանակներում

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ
ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔ
«ՀՀ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔ
«ՏԵՂԱԿԱՆ ՀԱՆՐԱՔՎԵԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔ
«ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔ
ԱՎԱԳԱՆՈՒ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿՈՂՄԻՑ ԸՆԴՈՒՆՎԱԾ՝ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ, ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՁԵԱՎՈՐՄԱՆ և ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ, ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՑ ԼՍՈՒՄՆԵՐԻ և ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ և ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԵՐԸ

<u>ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ</u>

սահմանվում է

որպես համայնքում իրականացվող գործընթաց, որի միջոցով բնակիչները, առանց խտրականության,

<u>տեղեկացվում են</u>

ՏԻՄ-երի գործունեության մասին

և կարող են

<u>ուղղակի կամ անուղղակի ներգործություն ունենալ</u>

տեղական ինքնակառավարման մարմինների

որոշումների վրա:

Անհրաժեշտ է հիշել, որ ...

Տեղական ինքնակառավարմանը համայնքի բնակիչների մասնակցությունը

ՍԿԶԲՈՒՆՔ Է:

****

Համայնքում տեղական ինքնակառավարմանը օրենքով սահմանված կարգով մասնակցելու իրավունք ունի տվյալ համայնքի տասնվեց տարին լրացած յուրաքանչյուր բնակիչ:

****

Տեղական ինքնակառավարմանը համայնքի բնակիչների մասնակցությունը կարող է տեղի ունենալ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ ՏԻՄ-երի իրավասությունների շրջանակներում, նրանց գործունեության բնագավառներում:

****

Տեղական ինքնակառավարմանը բնակիչները կարող են մասնակցել ինչպես անձամբ, այնպես էլ հասարակական միավորումների և քաղաքացիական նախաձեռնությունների միջոցով:

****

Համայնքի բնակիչների, նրանց խմբերի, ՏԻՄ-երի փոխհարաբերությունները, մասնակցության ձևերը, ընթացակարգերը սահմանվում են «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով, ինչպես նաև համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգով:

****

Համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը, հաշվի առնելով տվյալ համայնքի առանձնահատկությունները, առնվազն պետք է սահմանի.

1) ՏԻՄ-երի գործունեության մասին բնակիչների իրազեկվածության ապահովման անհրաժեշտ պայմանները.

2) այն բավարար պայմաններն ու չափանիշները, որոնք անհրաժեշտ են գործնականում ապահովելու համայնքի բնակիչների իրազեկման և մասնակցության միջոցառումների կազմակերպումն ու անցկացումը բնակիչներին մատչելի և հարմար վայրերում՝ ապահովելով նաև համայնքի հաշմանդամություն ունեցող անձանց և սակավաշարժուն խմբերի մասնակցությունը:

Համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության նպատակն է՝

ապահովել համայնքի բնակիչների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների, ոչ ֆորմալ խմբերի լիարժեք և ժամանակին մասնակցությունն ու ներգործությունը համայնքային քաղաքականությունների մշակման և որոշումների կայացման գործընթացներում՝ երաշխավորելով հանրային տեղեկատվության լիակատար թափանցիկությունն ու մատչելիությունը:

Համայնքի ավագանու անդամն իրավունք ունի՝

կատարելու համայնքի բնակիչների ընդունելություն, կազմակերպելու հանրային հանդիպումներ ու քննարկումներ:

Համայնքի ավագանու անդամը պարտավոր է՝

օժանդակել համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցությանը:

Համայնքի ավագանին օրենքով սահմանված կարգով քննարկում և ընդունում է՝

- **Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը.**
- **Հանրային բաց լսումների և/կամ/ քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը.**
- **Համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության կարգը:**

Համայնքի ղեկավարը տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության բնագավառում իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները.

1) համայնքի բնակիչների համար ստեղծում է բավարար պայմաններ՝ իրազեկ լինելու ՏԻՄ-երի գործունեության մասին և մասնակցելու համայնքի կառավարմանն ու զարգացմանը՝ այդ նպատակով օգտագործելով համայնքում հասանելի որևէ ձև կամ միջոց (այդ թվում՝ տեղեկատվության և հեռահաղորդակցության).

2) ապահովում է համայնքի բնակիչների իրազեկման և մասնակցության միջոցառումների կազմակերպումն ու անցկացումը բնակիչներին մատչելի և հարմար վայրերում, ինչպես նաև ստեղծում է համապատասխան անհրաժեշտ պայմաններ այդ միջոցառումներին մասնակցելու ցանկություն հայտնած համայնքի հաշմանդամություն ունեցող անձանց և սակավաշարժուն խմբերի համար.

3) կազմակերպում է տեղական ինքնակառավարմանն առնչվող օրենսդրական և ենթաօրենսդրական կարևորագույն նախաձեռնությունների և նախագծերի, մասնավորապես համայնքի զարգացման ծրագրերի և տարեկան բյուջեի, համայնքի կողմից մատուցվող հանրային ծառայությունների ոլորտներում համայնքի ավագանու և ղեկավարի որոշումների, համայնքի գլխավոր հատակագծի, քաղաքաշինական, բնապահպանական, կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների, Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից վարչատարածքային բաժանման ծրագրվող փոփոխությունների վերաբերյալ հանրային լսումներ կամ քննարկումներ, դրանց վերաբերյալ առաջարկությունների ընդունումը և ներկայացումը նախաձեռնությունների և նախագծերի հեղինակներին.

4) համայնքի բնակիչներին, հասարակության ներկայացուցիչներին իրազեկում կամ ներգրավում է համայնքի տարածքում կազմակերպվող ուսուցման և վերապատրաստման ծրագրերում:

Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարը՝

համայնքի բնակիչներին, հասարակության ներկայացուցիչներին իրազեկում է ՏԻՄ-երի գործունեության մասին և կազմակերպում վերջիններիս մասնակցությամբ միջոցառումներ՝ սահմանված «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով օրենքով, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով և իրավական ակտերով, ինչպես նաև համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության և հանրային բաց լսումների և քննարկումների կազմակերպման և անցկացման կարգերով:

Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցությունը կարող է լինել՝

- **Ակտիվ,** երբ քաղաքացիները համագործակցում են իրենց իսկ կողմից ընտրված ՏԻՄ-երի կամ համայնքի աշխատակազմի հետ՝ ազդեցություն ունենալու հանրային որոշումների վրա:
  Ակտիվ ձևերից են՝ բնակիչների ներգրավումը համայնքի կառավարման և զարգացման, ՏԻՄ-երի որոշումների կայացման գործընթացներում՝ հնարավորություն տալով բնակիչներին ներազդելու դրանց վրա, բնակիչների կարծիքի հարցումը և բնակիչներից տեղեկատվության հավաքագրումը:
- **Պասիվ,** երբ քաղաքացիները պարզապես հաճախում են հանրային հանդիպումներին՝ ՏԻՄ-երի նոր ծրագրերի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու, կամ ընտրություններին մասնակցելու համար:
  Պասիվ ձևերից են՝ բնակիչների ծանուցումը, իրազեկումը և (կամ) կրթումը:

ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ



Բնակիչների մասնակցության ձևի կիրառման տիպային նպատակները

Բնակիչների մասնակցության ձևի ընտրության ռազմավարությունը կախված է նրանից, թե բնակիչների ներգրավմամբ ի՞նչ նպատակներ են հետապնդվում ՏԻՄ-երի կողմից:

Բնակիչների մասնակցության ձևի կիրառման տիպային նպատակներից են՝

- տեղեկացնել բնակիչներին տեղական իշխանությունների նոր նախաձեռնությունների մասին և ապահովել նրանց մշտական տեղեկացվածությունը, որպեսզի նրանք մասնակցեն որոշումներ կայացնելու գործընթացին,
- կրթել բնակիչներին, որպեսզի նրանք ավելի խելամտորեն վերա բերվեն տեղական իշխանությունների նախաձեռնություններին, ինչպես նաև՝ կարողանան գնահատել այլընտրանքների առավելություններն ու թերությունները,
- հայցել տեղեկատվություն բնակիչներից, որպեսզի ընդլայնվի տեղեկատվության աղբյուրների շրջանակը,
- խորհրդակցել բնակիչների հետ, որպեսզի պարզվի նրանց կարծիքը տեղական իշխանությունների նոր նախաձեռնությունների վերաբերյալ,
- ներգրավել բնակիչներին համայնքի պլանավորման գործընթացում, որպեսզի նրանք մասնակցեն համայնքի հետագա տեսլականների, ռազմավարությունների և ծրագրերի մշակմանը,
- ապահովել հետադարձ կապ բնակիչների հետ, որպեսզի պարզվի տեղական իշխանությունների նախաձեռնությունների ազդեցությունը բնակիչների վրա և ճշտվեն հետագա գործողությունները,
- ներգրավել բնակիչներին որոշումներ կայացնելու գործընթացում՝ ապահովելով նրանց ուղղակի մասնակցությունը խորհրդակցան մարմիններում կամ հանձնաժողովներում:

Բնակիչների մասնակցության ձևերի համապատասխանեցումը նպատակներին

Մասնակցության ձևը	Տեղե-կացնել	Կրթել	Տեղեկութ-յուններ հայցել	Խորհըր-դակցել	Պլանա-վորել	Հետադարձ կապ ապահովել	Ուղղակի ներգրա-վել
Հանրային լսումներ և (կամ) քննարկումներ	X	X	X	X			
Հանրային ժողովներ, հանդիպումներ	X	X	X	X		X	
Հարցումներ	X		X	X		X	
Ֆոկուս խմբեր	X		X	X	X	X	X
Խորհրդակցական մարմիններ	X	X	X	X	X	X	X
Համայնքային ֆորմալ և ոչ ֆորմալ խմբեր	X	X	X	X	X	X	X
ՏԻՄ-երին հանրագրի ներկայացման՝ բնակիչների նախաձեռնություն	X	X	X	X	X	X	X
Հանրային տե-ղեկատվություն	X	X					
Համայնքային ընդունելություններ	X	X					
Կրթական ծրագրեր	X	X					
Հայտարարություններ տեղական ԶԼՄ-ներով	X	X					
Ընդունելություններ և «բաց դռների» ծրագրեր	X	X	X				
Լրատվամիջոցների հետ ուղիղ կապեր	X	X	X				
Մասնակցային բյուջետավորում	X	X	X	X	X	X	X
Հանրաքվեներ	X	X	X			X	X
Էլեկտրոնային և համացանցային միջոցներ	X	X	X	X	X	X	X

ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համայնքի ավագանու նիստի օրակարգում հարց ընդգրկելու նախաձեռնությունը **ՀՀ օրենսդրության մեջ ամրագրվել է 2013 թվականի հունիսի 19-ին, երբ Խարտիայի լրացուցիչ արձանագրության դրույթներն ընդգրկվեցին ՀՀ օրենսդրությունում:**

Համայնքում նախաձեռնության կազմակերպումը և իրականացումը համայնքի բնակիչների համար կարևոր հարցերից որևէ մեկի վրա համայնքի ՏԻՄ-երի ուշադրությունը հրավիրելու և այն նրանց քննարկման առարկան դարձնելու կանոնակարգված գործընթացն է:

Համայնքի ավագանու նիստի օրակարգում հարց ընդգրկելու նախաձեռնությամբ կարող է հանդես գալ համայնքում հաշվառված, տասնվեց տարին լրացած անձանց ոչ պակաս, քան՝

- ***մեկ տոկոսը՝ 10 000-ից ավելի բնակիչ ունեցող համայնքներում,***
- ***երկու տոկոսը՝ 1000-ից մինչև 10 000 բնակիչ ունեցող համայնքներում,***
- ***չորս տոկոսը՝ մինչև 1000 բնակիչ ունեցող համայնքներում:***

Հարկավոր է հիշել, որ ...

Ավագանու նիստի օրակարգում հարց ընդգրկելու նախաձեռնությունն ստորագրում են համայնքի՝ դրան կողմ բնակիչները և ներկայացնում են համայնքի ղեկավարին:

Համայնքի բնակիչների նախաձեռնությունը ներկայացվում և քննարկվում է ավագանու նիստում ոչ ուշ, քան համայնքի ղեկավարի կողմից դրա ստանալուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում:

Նույն նախաձեռնությունը ավագանու քննարկմանը կարող է կրկին ներկայացվել և օրենքով սահմանված կարգով ընդգրկվել օրակարգում՝ դրա հերթական (նաև առաջին) քննարկումից առնվազն վեց ամիս հետո:

Համայնքի բնակիչների նախաձեռնությունը ավագանու նիստում ներկայացնում է նախաձեռնող բնակիչների ընտրած ներկայացուցիչը՝ որպես հեղինակ, իսկ դրա քննարկման կարգը սահմանվում է ավագանու կանոնակարգով:

ՀՀԶԾ-ի, ՄԺԾԾ-ի և բյուջեի կառավարման գործընթացներում համայնքի բնակիչների մասնակցությունը

ՀՀԶԾ-ի կամ տարեկան բյուջեի կառավարման (կազմման, հանրային քննարկման, իրականացման (կատարման) և վերահսկման) գործընթացներում համայնքի բնակիչների մասնակցությունն ապահովելու համար **համայնքի ղեկավարի առաջարկությամբ և համայնքի ավագանու որոշմամբ ձևավորվում է համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմին**՝ աշխատակազմի և համայնքային կազմակերպությունների համապատասխան մասնագետների ընդգրկմամբ, ինչպես նաև համայնքի ավագանու մեկից մինչև երեք անդամների, բնակիչների, փորձագետների և այլ շահագրգիռ անձանց ներգրավմամբ (վերջիններիս համաձայնությամբ):

Համայնքի ղեկավարը մինչև ՀՀԶԾ-ի, ՄԺԾԾ-ի կամ տարեկան բյուջեի նախագծերը համայնքի ավագանու հաստատմանը ներկայացնելը կազմակերպում և անցկացնում է հանրային բաց լսումներ կամ քննարկումներ՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջը: Հանրային բաց լսումներում կամ քննարկումներում ստացված և ընդունված առարկությունների և առաջարկությունների վերաբերյալ համայնքի ղեկավարը համայնքի ավագանուն տրամադրում է տեղեկատվություն:

ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

Հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների (ԽՄ-ների) ձևավորման ինստիտուտը ՀՀ օրենսդրության մեջ ամրագրվել է 2013 թվականին, երբ Խարտիայի լրացուցիչ արձանագրության դրույթներն ամրագրվեցին ՀՀ օրենսդրությունում:

ԽՄ-ները ձևավորվում են «Համայնքի ղեկավարին կից ԽՄ-ների ձևավորման և գործունեության կարգ»-ն ընդունելու վերաբերյալ համայնքի ավագանու որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հետո երկու ամսվա ընթացքում և գործում են մինչև համայնքի ղեկավարի պաշտոնավարման ժամկետի ավարտը:

Խորհրդակցական մարմինների կազմի մեջ կարող են մտնել.

- ✓ **ավագանու անդամները,**
- ✓ **աշխատակազմի կամ համայնքային ենթակայության կազմակերպությունների մասնագետները,**
- ✓ **ՔՀՄՀ ներկայացուցիչները,**
- ✓ **պետական կառավարման մարմինների՝ համայնքի տարածքում գործող տարածքային ծառայությունների ներկայացուցիչները,**
- ✓ **համայնքում գործող բազմաբնակարան բնակելի շենքերի կառավարման մարմինները և (կամ) համայնքի վարչական շրջանների ղեկավարները,**
- ✓ **փորձագետները,**

- ✓ համայնքի ակտիվ բնակիչները,
- ✓ այլ շահագրգիռ անձիք:

Խորհրդակցական մարմինների կազմի մեջ չեն կարող մտնել.

- ✓ դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձինք
- ✓ հանցագործության համար դատապարտված անձինք, ովքեր իրենց պատիժը կրում են քրեակատարողական հիմնարկներում
- ✓ զինված ուժերի ժամկետային զինծառայողները:

ԽՄ-ների գործառույթներն են.

- ✓ ՏԻՄ-երի գործունեության վերաբերյալ համայնքի բնակիչներին իրազեկումը,
- ✓ համայնքի զարգացման ուղղությունների վերաբերյալ համայնքի ղեկավարին խորհրդատվության տրամադրումը,
- ✓ հանրային կարևորություն և հնչեղություն ունեցող խնդիրների վերաբերյալ եզրակացությունների և առաջարկությունների ներկայացումը,
- ✓ մասնակցությունը համայնքի զարգացման ծրագրերի, տարեկան աշխատանքային պլանների, բյուջեի և այլ ծրագրային փաստաթղթերի մշակման, քննարկման, իրականացման և վերահսկման, մոնիթորինգի, աուդիտի և գնահատման աշխատանքներին,
- ✓ ԽՄ-ների կողմից ընդունված որոշումների հետագա կատարման ընթացքի հետևումը,
- ✓ ՏԻՄ-երի գործունեության նկատմամբ հանրային մշտադիտարկման իրականացումը,
- ✓ աջակցությունը համայնքում կոնֆլիկտների կանխարգելմանը, ծագած կոնֆլիկտների լուծմանը, առկա հակամարտությունների մեղմմանը:

Համայնքի ղեկավարին կից ձևավորվում և գործում են ըստ ՏԻՄ-երի հայեցողության քանակի ԽՄ-ներ, որոնց անվանումները ներառվում են ավագանու կողմից ընդունվող կարգում:

. . . . . .

ԽՄ-ներն ունեն նախագահ, որը համայնքի ղեկավարն է և քարտուղար, որը համայնքի աշխատակազմի քարտուղարն է:

. . . . . .

ԽՄ-ի որոշումները համայնքի ղեկավարի համար կրում են *խորհրդատվական բնույթ* և դրանց հիման վրա համայնքի ղեկավարը կարող է ընդունել համապատասխան

որոշումներ:

ՏԵՂԱԿԱՆ ՀԱՆՐԱՔՎԵՆ

լայնորեն ճանաչված և օգտագործվող քաղաքացիական մասնակցության ձև է: Դրա միջոցով ընտրազանգվածը կարող է համայնքին վերաբերող առաջադրված հարցերին քվեարկել կողմ կամ դեմ:

Հանրաքվեն կարող է լինել պարտադիր և ոչ պարտադիր:

Պարտադիր հանրաքվեն

հստակ պատասխան է տալիս հանրաքվեի դրված հարցին(երին), որը պարտադիր է ներկայացուցչական մարմնի համար: Դա նշանակում է, որ տեղական ներկայացուցչական մարմինը՝ ավագանին չի կարող այլ որոշում ընդունել, քան ամրագրել հանրաքվեով ընդունվածը:

Ոչ պարտադիր հանրաքվեն

տեղական իշխանությունների համար ունի խորհրդատվական բնույթ: Հանրաքվեի այս ձևը տեղական ներկայացուցչական մարմնին է վերապահում հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ վերջնական որոշման ընդունումը

Անհրաժեշտ է հիշել, որ ...

Տեղական հանրաքվեին բնակիչների մասնակցության իրավակարգավորումները սահմանված են «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքով:

ՏԻՄ-երի ընտրություններին բնակիչների մասնակցության իրավակարգավորումները սահմանված են «ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքով:

Թեմա 3. Տեղական հանրաքվեի կազմակերպման և իրականացման գործընթացներում համայնքի ավագանու լիազորությունների շրջանակը

ՏԵՂԱԿԱՆ ՀԱՆՐԱՔՎԵՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ
ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
«ՏԵՂԱԿԱՆ ՀԱՆՐԱՔՎԵԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔ
«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔ
«ՀՀ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔ
ԻՐԱՎԱԿԱՆ ԱՅԼ ԱԿՏԵՐ

ՏԵՂԱԿԱՆ ՀԱՆՐԱՔՎԵԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ	
ՀՈԴՎԱԾ 183	Համայնքի բնակիչները կարող են անմիջականորեն մասնակցել համայնքի գործերի կառավարմանը՝ համայնքային նշանակության հանրային հարցերը **տեղական հանրաքվեով լուծելու միջոցով:** ********** **Տեղական հանրաքվեի անցկացման կարգը**, ինչպես նաև համայնքի բնակիչների կողմից համայնքի գործերի կառավարմանն անմիջականորեն մասնակցելու այլ եղանակները սահմանվում են օրենքով:

«ՏԵՂԱԿԱՆ ՀԱՆՐԱՔՎԵԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔ	
ԸՆԴՈՒՆՎԵԼ Է ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	**06.02.2002 թ.** **13.06.2018թ., 19.12.2019թ.,** **07.05.2021թ., 05.12. 2024թ.**
ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ Է	• Տեղական հանրաքվեի սկզբունքները • Տեղական հանրաքվեին մասնակցելու իրավունքը • Տեղական հանրաքվեի դրվող հարցերի նախագիծը կամ համայնքային նշանակության հանրային հարցը տեղական հանրաքվեի դնելու կարգը • Տեղական հանրաքվեի դրվող հարցի հրապարակման, տեղական հանրաքվեի նշանակման, կազմակերպման, արդյունքների ամփոփման, տեղական հանրաքվեի դրված ակտերի ուժի մեջ մտնելու և հանրաքվեի փաստաթղթերը պահպանման հանձնելու հետ կապված հարաբերությունները:

Տեղական հանրաքվեն

համայնքի գործերի կառավարմանն անմիջականորեն մասնակցելու եղանակ է, որն իրականացվում է տվյալ համայնքի բնակիչների համայնքային նշանակության հանրային հարցերով քվեարկության միջոցով:

Տեղական հանրաքվեն

անցկացվում է տվյալ համայնքի տարածքում:

Տեղական հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեն

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքով ՏԻՄ-երի ընտրություններին ընտրելու իրավունք ունեցող անձինք:

Տեղական հանրաքվեին մասնակցելու իրավունք չունեն

դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված, ինչպես

նաև դիտավորությամբ կատարված ծանր և առանձնապես ծանր հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք:

Տեղական հանրաքվեի դրվող հարցերը

Տեղական հանրաքվեի կարող են դրվել տվյալ համայնքի բնակիչների համայնքային նշանակության հանրային հարցերը, **բացառությամբ՝**

1) մարդու և քաղաքացու իրավունքներին, ազատություններին ու պարտականություններին, դրանց իրականացումն ապահովող սահմանադրական երաշխիքների վերացմանը կամ սահմանափակմանը վերաբերող հարցերի.

2) պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորություններին առնչվող հարցերի.

3) համայնքի ղեկավարի աշխատակազմի ձևավորմանը վերաբերող հարցերի.

4) համայնքի բյուջեի ընդունման կամ փոփոխման, ինչպես նաև համայնքի ֆինանսական պարտավորությունների կատարման կամ փոփոխման մասին հարցերի.

5) համայնքի սեփականության օտարման մասին հարցերի.

6) բնակչության պաշտպանության, առողջությունն ու անվտանգությունն ապահովող արտակարգ և շտապ միջոցառումներ ձեռնարկելու մասին հարցերի.

7) պատմության, մշակույթի, բնության հուշարձաններին և արգելանոցներին վնաս հասցնող հարցերի.

8) տեղական հարկերին, տուրքերին, վճարներին վերաբերող հարցերի.

9) միջհամայնքային միավորումներ ստեղծելու վերաբերյալ հարցերի.

10) այն հարցերը, որոնք արդեն իսկ դրվել են տեղական հանրաքվեի նախորդ մեկ տարվա ընթացքում և նույնաբովանդակ են:

****

Տեղական հանրաքվեով ընդունված ակտը կարող է փոփոխվել միայն տեղական հանրաքվեով:

****

Տեղական հանրաքվեի դրվող հարցը ձևակերպվում է այնպես, որ հնարավոր լինի դրան տալ միանշանակ պատասխան:

Տեղական հանրաքվե անցկացնելու արգելքը

Տեղական հանրաքվե չի կարող անցկացվել Ազգային ժողովի կամ տվյալ համայնքում ՏԻՄ-երի ընտրությունների օրը:

****

Տեղական հանրաքվե չի կարող անցկացվել Հայաստանի Հանրապետության կամ տվյալ համայնքի տարածքում ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ:

****

Այն դեպքում, երբ ռազմական կամ արտակարգ դրությունը հայտարարվել է սույն օրենքով նախատեսված տեղական հանրաքվեի գործընթացն սկսելուց հետո, սակայն մինչև համայնքի ղեկավարի կողմից տեղական հանրաքվե նշանակելը, ապա մինչև ռազմական կամ արտակարգ դրություն հայտարարելը սկսված հարցը տեղական հանրաքվեի դնելու հետ կապված բոլոր գործողություններն ու ժամկետները կասեցվում են և վերսկսվում ռազմական կամ արտակարգ դրության ավարտից հետո:

Տեղական հանրաքվե անցկացնելու նախաձեռնության իրավունք ունեն՝

տվյալ համայնքում տեղական հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող անձինք, տվյալ համայնքի ավագանու անդամների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդը և համայնքի ղեկավարը:

Համայնքի ավագանու անդամների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի կամ համայնքի ղեկավարի կողմից տեղական հանրաքվեի անցկացումը նախաձեռնելու դեպքում **համայնքի ավագանին մեկամսյա ժամկետում** տեղական հանրաքվե անցկացնելու վերաբերյալ որոշումն ընդունում է **իր անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:**

Տեղական հանրաքվե անցկացնելու մասին որոշումն ընդունելուց կամ նախաձեռնող խմբի կողմից հավաքված և անհրաժեշտ քանակի ստորագրությունների վավերականության հաստատման մասին համապատասխան ընտրական հանձնաժողովի որոշումն ստանալուց հետո՝

եռօրյա ժամկետում, համայնքի ղեկավարը նշանակում է հանրաքվե:

Համայնքում տեղական հանրաքվե անցկացնելու մասին որոշում ընդունելուց հետո ավագանին համայնքի ղեկավարի ներկայացմամբ ընդունում է տեղական հանրաքվեի նախապատրաստման և անցկացման ծախսերի ֆինանսավորման մասին որոշում:

Համայնքում տեղական հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող անձանց կողմից տեղական հանրաքվե անցկացնելու նախաձեռնության հետ կապված իրավակարգավորումները սահմանված են «Տեղական ինքնակառավարման մասին» և «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքներով:

Անհրաժեշտ է իմանալ, որ ...

Տեղական հանրաքվե կարող է նշանակվել միայն օրացուցային ոչ աշխատանքային օրը:

****

Տեղական հանրաքվեն անցկացվում է նշանակման օրվանից ոչ շուտ, քան 50 և ոչ ուշ, քան 65 օր հետո:

****

Նշանակված, սակայն ռազմական կամ արտակարգ դրության պատճառով չանցկացված տեղական հանրաքվեն անցկացվում է ռազմական կամ արտակարգ դրության ավարտից ոչ շուտ, քան 50 և ոչ ուշ, քան 65 օր հետո: Համայնքի ղեկավարը տեղական հանրաքվեն նշանակում է ռազմական կամ արտակարգ դրության ավարտից հետո՝ եռօրյա ժամկետում:

****

Տեղական հանրաքվե նշանակելու մասին որոշումը պաշտոնապես հրապարակվում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 50 օր առաջ:

****

Համայնքի ղեկավարի կողմից տեղական հանրաքվե նշանակվելուց հետո այլ տեղական հանրաքվե նշանակելու անհրաժեշտության դեպքում համայնքի ղեկավարը այլ տեղական հանրաքվեն նշանակում է արդեն նշանակված տեղական հանրաքվեի հետ նույն օրը, իսկ դրա անհնարինության դեպքում՝ նշանակված տեղական հանրաքվեի օրվանից առնվազն 15 օր հետո:

****

Տեղական հանրաքվեի դրված ակտի նախագիծը հրապարակվում է համայնքի և Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքերում տեղական հանրաքվեի անցկացման օրվանից ոչ ուշ, քան 50 օր առաջ:

Կարևոր է իմանալ, որ ...

Տեղական հանրաքվեի կազմակերպման և անցկացման (ներառյալ՝ ցուցակների կազմման) ծախսերը կատարվում են համայնքային բյուջեի միջոցների հաշվին:

Տեղական հանրաքվեի քարոզչության հիմնական կանոնները՝

քարոզչությունն սկսվում է տեղական հանրաքվե նշանակելու մասին համայնքի ղեկավարի որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ յոթերորդ օրը, և ավարտվում է քվեարկությունից մեկ օր առաջ: Քվեարկության և դրան նախորդող օրը քարոզչությունն արգելվում է.

- տեղական հանրաքվեի դրվող յուրաքանչյուր հարցով կարող է գործել մեկ «ԱՅՈ» և մեկ «ՈՉ» քարոզչության կողմ.
- տեղական հանրաքվե նշանակելու մասին համայնքի ղեկավարի որոշումն ուժի մեջ մտնելուց հետո տեղական հանրաքվե անցկացնելու նախաձեռնության հեղինակը համարվում է «ԱՅՈ» քարոզչության կողմ.
- «ԱՅՈ» քարոզչության կողմի լիազոր ներկայացուցիչ է համարվում նախաձեռնող խմբի լիազոր ներկայացուցիչը՝ համայնքի բնակիչների նախաձեռնության դեպքում, համայնքի ղեկավարը՝ իր նախաձեռնության դեպքում և նախաձեռնության վերաբերյալ պաշտոնական գրության մեջ որպես ներկայացուցիչ նշված տեղական հանրաքվե անցկացնելու մասին

որոշման նախագծին կողմ քվեարկած համայնքի ավագանու անդամներից մեկը՝ համայնքի ավագանու անդամների նախաձեռնության դեպքում.

- «ՈՉ» քարոզչության կողմ կարող են ձևավորել միայն տեղական հանրաքվե անցկացնելու մասին ավագանու որոշման նախագծին դեմ կամ ձեռնպահ քվեարկած ավագանու անդամները: «ՈՉ» քարոզչության կողմը ենթակա է գրանցման Կենտրոնական ընտրական հանձնաժողովում տեղական հանրաքվեի նշանակելու մասին համայնքի ղեկավարի որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ հինգ օրվա ընթացքում:

Անհրաժեշտ է իմանալ, որ ...

Տեղական հանրաքվեի դրվող հարցի ընդունման նախաձեռնությանը համայնքի բնակիչների միանալու, տեղական հանրաքվեի կազմակերպման, քարոզչության իրականացման, տեղական հանրաքվեի դիտորդների, վստահված անձանց, այցելուների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների իրավունքների, պարտականությունների, գործունեության կարգի և երաշխիքների, տեղական հանրաքվեի քվեարկության կազմակերպման և անցկացման կարգի, տեղական հանրաքվեի արդյունքներն ամփոփելու և անճշտությունները որոշելու կարգի հետ կապված իրավակարգավորումները սահմանված են «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքով:

Հետաքրքիր է իմանալ, որ ...

Չնայած օրենսդրական վերոնշյալ իրավակարգավորումներին ՀՀ-ում տեղական ինքնակառավարման համակարգի ներդրումից մինչև այժմ համայնքներում սեփական նախաձեռնությամբ տեղական հանրաքվե չի անցկացվել:

****

ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին միայն 2015 թվականին են տեղական հանրաքվեներ կազմակերպվել և անցկացվել՝ ՀՀ կառավարության նախաձեռնությամբ թվով 3 (Դիլիջան, Թումանյան, Տաթև) համայնքային փնջերում՝ համայնքների միավորման հարցի վերաբերյալ անցկացված տեղական հանրաքվեները:

Կարևոր է հիշել, որ ...

Ավագանու լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումն ուժի մեջ մտնելուց հետո ավագանին իրավունք չունի նշանակելու

տեղական հանրաքվե:

ՄԱՍ 2. ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ (ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ)

Վարժություն 1. ***Երկու բազմությունների տարրերի միջև համապատասխանության հաստատում (որոնում)***

Օգտագործվող հիմնական հասկացությունները (ձախ սյունակում) գծով միացրեք համապատասխան սահմանման հետ (աջ սյունակում):

Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցություն	համայնքում իրականացվող գործընթաց, որի միջոցով բնակիչները լայն մասնակցություն են ունենում համայնքային քաղաքականությունների մշակմանը և իրականացմանը, համայնքային խնդիրների բարձրացմանը և լուծմանը:
Մասնակցային ժողովրդավարություն	կառուցակարգերի, գործընթացների, փոխհարաբերությունների և ինստիտուտների համալիր է, որոնց միջոցով քաղաքացիները և նրանց խմբերը համակարգում են իրենց հետաքրքրություններն ու շահերը, իրացնում են իրենց իրավունքներն ու պարտականությունները և հանդես են գալիս համատեղ:
Տեղական հանրաքվե	համայնքում իրականացվող գործընթաց, որի միջոցով բնակիչները, առանց խտրականության, տեղեկացվում են տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին և կարող են ուղղակի կամ անուղղակի ներգործություն ունենալ տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների վրա:
Պատշաճ ժողովրդավարական կառավարում	կառավարման ձև է, որի կրողներն են բնակչությունը ներկայացնող ուղղակի ընտրություններով ընտրված անհատները:
Ներկայացուցչական ժողովրդավարություն	համայնքի գործերի կառավարմանն անմիջականորեն մասնակցելու եղանակ, որն իրականացվում է տվյալ համայնքի բնակիչների համայնքային նշանակության հանրային հարցերով քվեարկության միջոցով:

Վարժություն 1. ***Երկու բազմությունների տարրերի միջև համապատասխանության հաստատում (որոնում).***

Օգտագործվող հիմնական հասկացությունները (ձախ սյունակում) գծով միացրեք համապատասխան սահմանման հետ (աջ սյունակում):

Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցություն	համայնքում իրականացվող գործընթաց, որի միջոցով բնակիչները, առանց խտրականության, տեղեկացվում են տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին և կարող են ուղղակի կամ անուղղակի ներգործություն ունենալ տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների վրա:
Մասնակցային ժողովրդավարություն	համայնքում իրականացվող գործընթաց, որի միջոցով բնակիչները լայն մասնակցություն են ունենում համայնքային քաղաքականությունների մշակմանը և իրականացմանը, համայնքային խնդիրների բարձրացմանը և լուծմանը:
Տեղական հանրաքվե	համայնքի գործերի կառավարմանն անմիջականորեն մասնակցելու եղանակ, որն իրականացվում է տվյալ համայնքի բնակիչների համայնքային նշանակության հանրային հարցերով քվեարկության միջոցով:
Պատշաճ ժողովրդավարական կառավարում	կառուցակարգերի, գործընթացների, փոխհարաբերությունների և ինստիտուտների համալիր է, որոնց միջոցով քաղաքացիները և նրանց խմբերը համակարգում են իրենց հետաքրքրություններն ու շահերը, իրացնում են իրենց իրավունքներն ու պարտականությունները և հանդես են գալիս համատեղ:
Ներկայացուցչական ժողովրդավարություն	կառավարման ձև է, որի կրողներն են բնակչությունը ներկայացնող ուղղակի ընտրություններով ընտրված անհատները:

Վարժություն 2. ***Հարցերի պատասխանների համապատասխանության հաստատում (որոնում)***

Յուրաքանչյուրդ առանձին որոշեք, թե 1-ին սյունակում բերված **6** հարցերի ենթադրյալ պատասխաններից ո՞ր պատասխանն է ճիշտ և Ձեր պատասխանը գրանցեք 2-րդ սյունակում: Երբ վերջացնեք առաջադրանքի կատարումը, խմբի մյուս անդամներին ծանոթացրեք Ձեր գրառումների հետ: Բոլոր տարբերությունները համատեղ քննարկեք և խմբով եկեք համաձայնության բոլոր հարցերի համար: Գրանցեք խմբի ընտրությունը յուրաքանչյուր հարցի համար 3-րդ սյունակում:

Հարցերը և ենթադրյալ պատասխանները	Հարցի ճիշտ պատասխանը **(իմ ընտրությունը)**	Հարցի ճիշտ պատասխանը **(խմբի ընտրությունը)**
1000-ից մինչև 10000 բնակիչ ունեցող համայնքներում՝ համայնքի ավագանու նիստի օրակարգում հարց ընդգրկելու նախաձեռնությամբ կարող է հանդես գալ համայնքում հաշվառված, տասնվեց տարին լրացած անձանց ոչ պակաս, քան՝ 1. չորս տոկոսը. 2. երկու տոկոսը. 3. մեկ տոկոսը. 4. երեք տոկոսը:		
Ավագանու նիստի օրակարգում հարց ընդգրկելու համայնքի բնակիչների նախաձեռնությունը ներկայացվում և քննարկվում է ավագանու նիստում ոչ ուշ, քան համայնքի ղեկավարի կողմից դրա ստանալուց հետո՝ 1. ոչ ուշ, քան 7 օրվա ընթացքում. 2. ոչ ուշ, քան երեք ամսվա ընթացքում. 3. ոչ ուշ, քան 15 օրվա ընթացքում. 4. ոչ ուշ, քան մեկ ամսվա ընթացքում:		
Տեղական հանրաքվեով ընդունված ակտը կարող է փոփոխվել միայն՝ 1. ավագանու որոշմամբ. 2. օրենքով. 3. տեղական հանրաքվեով. 4. մարզպետի որոշմամբ:		
Հանրային բաց լսումներում կամ քննարկումներում		

ստացված և ընդունված առարկությունների և առաջարկությունների վերաբերյալ համայնքի ղեկավարը տրամադրում է տեղեկատվություն՝ 1. համայնքի ավագանուն. 2. համապատասխան մարզպետին. 3. ՀՀ կառավարությանը. 4. Ազգային ժողովին:		
ՀՀԶԾ-ի կամ տարեկան բյուջեի կառավարման (կազմման, հանրային քննարկման, իրականացման (կատարման) և վերահսկման) գործընթացներում համայնքի բնակիչների մասնակցությունն ապահովելու համար համայնքի ղեկավարի առաջարկությամբ և համայնքի ավագանու որոշմամբ ձևավորվում է համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմին՝ 1. աշխատակազմի և համայնքային կազմակերպությունների համապատասխան մասնագետների ընդգրկմամբ. 2 աշխատակազմի մասնագետների, փորձագետների և այլ շահագրգիռ անձանց ներգրավմամբ (վերջիններիս համաձայնությամբ). 3. աշխատակազմի և համայնքային կազմակերպությունների համապատասխան մասնագետների ընդգրկմամբ, ինչպես նաև համայնքի ավագանու մեկից մինչև երեք անդամների, բնակիչների, փորձագետների և այլ շահագրգիռ անձանց ներգրավմամբ (վերջիններիս համաձայնությամբ). 4. համայնքի ավագանու մեկից մինչև երեք անդամների, բնակիչների, փորձագետների և այլ շահագրգիռ անձանց ներգրավմամբ:		
Ավագանու նիստի օրակարգում հարց ընդգրկելու համայնքի բնակիչների նույն նախաձեռնությունը ավագանու քննարկմանը կարող է կրկին ներկայացվել և օրենքով սահմանված կարգով ընդգրկվել օրակարգում՝ 1. դրա հերթական (նաև առաջին) քննարկումից առնվազն երեք ամիս հետո. 2. դրա համայնքապետարանի աշխատակազմում		

գրանցելուց հետո մեկ ամիս հետո. 3. դրա հերթական (նաև առաջին) քննարկումից առնվազն վեց ամիս հետո. 4. համայնքի ղեկավարի հայեցողությամբ:		

Վարժություն 2. ***Հարցերի պատասխանների համապատասխանության հաստատում (որոնում)***

Յուրաքանչյուրդ առանձին որոշեք, թե 1-ին սյունակում բերված 8 հարցերի ենթադրյալ պատասխաններից ո՞ր պատասխանն է ճիշտ և Ձեր պատասխանը գրանցեք 2-րդ սյունակում: Երբ վերջացնեք առաջադրանքի կատարումը, խմբի մյուս անդամներին ծանոթացրեք Ձեր գրառումների հետ: Բոլոր տարբերությունները համատեղ քննարկեք և խմբով եկեք համաձայնության բոլոր հարցերի համար: Գրանցեք խմբի ընտրությունը յուրաքանչյուր հարցի համար 3-րդ սյունակում:

Հարցերը և ենթադրյալ պատասխանները	**Հարցի ճիշտ պատասխանը**
1000-ից մինչև 10000 բնակիչ ունեցող համայնքներում՝ համայնքի ավագանու նիստի օրակարգում հարց ընդգրկելու նախաձեռնությամբ կարող է հանդես գալ համայնքում հաշվառված, տասնվեց տարին լրացած անձանց ոչ պակաս, քան՝ 1. չորս տոկոսը. 2. երկու տոկոսը. 3. մեկ տոկոսը. 4. երեք տոկոսը:	**2**
Ավագանու նիստի օրակարգում հարց ընդգրկելու համայնքի բնակիչների նախաձեռնությունը ներկայացվում և քննարկվում է ավագանու նիստում ոչ ուշ, քան համայնքի ղեկավարի կողմից դրա ստանալուց հետո՝ 1. ոչ ուշ, քան 7 օրվա ընթացքում. 2. ոչ ուշ, քան երեք ամսվա ընթացքում. 3. ոչ ուշ, քան 15 օրվա ընթացքում. 4. ոչ ուշ, քան մեկ ամսվա ընթացքում:	**4**
Տեղական հանրաքվեով ընդունված ակտը կարող է փոփոխվել միայն՝ 1. ավագանու որոշմամբ. 2. օրենքով. 3. տեղական հանրաքվեով. 4. մարզպետի որոշմամբ:	**3**

Հանրային բաց լսումներում կամ քննարկումներում ստացված և ընդունված առարկությունների և առաջարկությունների վերաբերյալ համայնքի ղեկավարը տրամադրում է տեղեկատվություն՝ 1. համայնքի ավագանուն. 2. համապատասխան մարզպետին. 3. ՀՀ կառավարությանը. 4. Ազգային ժողովին:	**1**
ՀՀԶԾ-ի կամ տարեկան բյուջեի կառավարման (կազմման, հանրային քննարկման, իրականացման (կատարման) և վերահսկման) գործընթացներում համայնքի բնակիչների մասնակցությունն ապահովելու համար համայնքի ղեկավարի առաջարկությամբ և համայնքի ավագանու որոշմամբ ձևավորվում է համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմին՝ 1. աշխատակազմի և համայնքային կազմակերպությունների համապատասխան մասնագետների ընդգրկմամբ. 2 աշխատակազմի մասնագետների, փորձագետների և այլ շահագրգիռ անձանց ներգրավմամբ (վերջիններիս համաձայնությամբ). 3. աշխատակազմի և համայնքային կազմակերպությունների համապատասխան մասնագետների ընդգրկմամբ, ինչպես նաև համայնքի ավագանու մեկից մինչև երեք անդամների, բնակիչների, փորձագետների և այլ շահագրգիռ անձանց ներգրավմամբ (վերջիններիս համաձայնությամբ). 4. համայնքի ավագանու մեկից մինչև երեք անդամների, բնակիչների, փորձագետների և այլ շահագրգիռ անձանց ներգրավմամբ:	**3**
Ավագանու նիստի օրակարգում հարց ընդգրկելու համայնքի բնակիչների նույն նախաձեռնությունը ավագանու քննարկմանը կարող է կրկին ներկայացվել և օրենքով սահմանված կարգով ընդգրկվել օրակարգում՝ 1. դրա հերթական (նաև առաջին) քննարկումից առնվազն երեք ամիս հետո. 2. դրա համայնքապետարանի աշխատակազմում գրանցելուց հետո մեկ ամիս հետո. 3. դրա հերթական (նաև առաջին) քննարկումից առնվազն վեց ամիս հետո. 4. համայնքի ղեկավարի հայեցողությամբ:	**3**

ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Հարց 1. Ի՞նչ է տեղական հանրաքվեն.

1) համայնքի իրավունքն ու կարողությունն է՝ սեփական պատասխանատվությամբ բնակիչների բարօրության նպատակով Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան լուծելու տեղական նշանակության հարցերը.
2) տեղական ինքնակառավարման մարմինների իրավունքն ու կարողությունն է՝ համայնքի բնակիչների շահերից ելնելով, Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, սեփական պատասխանատվությամբ լուծելու համայնքային նշանակության հանրային հարցերը.
3) **համայնքի գործերի կառավարմանն անմիջականորեն մասնակցելու եղանակ է, որն իրականացվում է տվյալ համայնքի բնակիչների համայնքային նշանակության հանրային հարցերով քվեարկության միջոցով:**

Հարց 2. Համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատում է՝

1) **համայնքի ավագանին.**
2) համայնքի ղեկավարը.
3) ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը:

Հարց 3. Համայնքում տեղական ինքնակառավարմանը օրենքով սահմանված կարգով մասնակցելու իրավունք ունի՝

1) տվյալ համայնքի տասնութ տարին լրացած յուրաքանչյուր բնակիչ.
2) **տվյալ համայնքի տասնվեց տարին լրացած յուրաքանչյուր բնակիչ.**
3) յուրաքանչյուր ոք:

Հարց 4. Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցությունը կարող է լինել՝

1) ակտիվ.
2) **ակտիվ և պասիվ.**
3) պասիվ:

Հարց 5. Ավագանու նիստում համայնքի բնակիչների նախաձեռնության քննարկման կարգը սահմանվում է՝.

1) **ավագանու կանոնակարգով**.
2) համայնքի ղեկավարի որոշմամբ.
3) օրենքով:

Հարց 6. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարը՝

1) համայնքի բնակիչներին իրազեկում է ՏԻՄ-երի գործունեության մասին.
2) համայնքի հասարակության ներկայացուցիչներին իրազեկում է ՏԻՄ-երի գործունեության մասին.
3) **համայնքի բնակիչներին, հասարակության ներկայացուցիչներին իրազեկում է ՏԻՄ-երի գործունեության մասին և կազմակերպում վերջիններիս մասնակցությամբ միջոցառումներ՝ սահմանված «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով և իրավական ակտերով, ինչպես նաև համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության և հանրային բաց լսումների և քննարկումների կազմակերպման և անցկացման կարգերով:**

Հարց 7. Միավորված համայնքում տեղական հանրաքվեն անցկացվում է՝

1) տվյալ համայնքի կենտրոնում.
2) **տվյալ համայնքի տարածքում.**
3) տվյալ համայնքի քաղաքային բնակավայրերում:

Հարց 8. Տեղական հանրաքվե կարող է նշանակվել՝

1) միայն երկուշաբթի օրը.
2) միայն աշխատանքային օրը.
3) **միայն օրացուցային ոչ աշխատանքային օրը:**

Հարց 9. Տեղական հանրաքվե անցկացնելու նախաձեռնության իրավունք ունեն՝

1) **տվյալ համայնքում տեղական հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող անձինք, տվյալ համայնքի ավագանու անդամների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդը և համայնքի ղեկավարը.**
2) տվյալ համայնքում տեղական հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող անձինք և տվյալ համայնքի ավագանու անդամների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդը.
3) տվյալ համայնքի ավագանու անդամների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդը և համայնքի ղեկավարը:

Հարց 10. Համայնքի ավագանու անդամը պարտավոր է՝

1) կազմակերպելու հանրային հանդիպումներ ու քննարկումներ.
2) կատարելու համայնքի բնակիչների ընդունելություն.
3) **օժանդակել համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցությանը:**

ՆՅՈՒԹԵՐ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. Թումանյան Դ., Շահբազյան Վ., «Մասնակցային ժողովրդավարությունը տեղական մակարդակում. Ինչու և ինչպես մասնակցել տեղական ինքնակառավարմանը», Երևան, 2011 թ.

2. Ձեռնարկ համայնքի ավագանու անդամների և անդամության թեկնածուների համար, Հայաստանի ավագանիների ասոցիացիա, 2016 թ.

3. «Տեղական ինքնակառավարման հիմունքները», ուսումնական ձեռնարկ, Է. Օրդյանի ընդհանուր խմբագրությամբ, «Պետական ծառայություն», Երևան, 2002 թ.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՀՀ Սահմանադրություն
2. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք
3. «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենք
4. ՀՀ ընտրական օրենսգիրք (սահմանադրական օրենք)
5. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

Համայնքի ավագանուն՝ ՀՀ Սահմանադրությամբ և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով վերապահված լիազորությունները

Հեղինակ՝ Ժիրայր Ղազարյան

Համակարգչային ձևավորող՝ Հասմիկ Նավասարդյան

ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ